

ԻՉՄԻՐՑԻՆ

Աստուած, հայու կտոր մը, յոյնի խլեակ մը, եւրոպացիի մը շոշոր-թը իրար խառնակելով, ստեղծած է Չմիւռնահայը՝ անոր տալով արեւմտեան ջնարակ մը:

Չմիւռնահայուն ետեւէն վազած է սատանան ու ըսած անոր, կամացուկ մը.

-Հայրեանակից, աննման դուրս եկար, իբրեւ Հայ: Խրատ մը տամ քեզի. մի հաւնի՛ր ոչ մէկ մարդու, մանաւանդ մի՛ հաւնի՛ր հայ ազգին պատկանող յիմարներուն եւ յամառներուն:

Չմիւռնահայը, որ չէր տեսած իր լսած խորհուրդին ո՛րքէ եկած ըլլալը, կարծեց, որ Աստուծոյ բերնով հրեշտակապետն էր իրեն հետ խօսողը ու հաւատարմօրէն գործադրեց իրեն տրուած պատուերը՝ բացարձակապէս մարդու չհաւնելով:

Անիկա արհամարհեց յոյնը՝ զայն գտնելով թեթեւ: Քննադատեց ֆրանսացին՝ զայն գտնելով բարակ: Խրտչեցաւ հայէն՝ զայն գտնելով հաստ:

Նոյնիսկ չափազանցեց: Չհաւնեցաւ ոչ մէկուն գաղափարին, զգացումին, գեղեցկութեան, գործին ու մանաւանդ՝ լեզուին:

Խօսիլ պէտք էր, սակայն, լեզուով մը: Աւելի քան խօսիլ պէտք էր չհաւնողի մը: Հարկ էր լեզու մը ստեղծել: Եւ որովհետեւ ինք ստեղծագործական տաղանդով չէր ծնած, այլ միայն թարգմանիչի տենդով, իրար խառնեց հայերէնը, յունարէնը, ֆրանսերէնը եւ թուրքերէնը՝ մէջտեղ բերելով զմիւռններէնը: Չէ՞ որ արդէն իւրաքանչիւր լեզու խառնուրդն է քանի մը հին լեզուներու: Չորս լեզուներու թելերով կազմեց լեզուական խաչ մը՝ յանուն լեզուական խաչելութեան:

Ու սկսաւ փայլիլ ու բարբառիլ:

Նմոյշ մը.

-Պոնժուռ, Վարվարա, թի՞ քանիս, քալա՞ իսէ, այս առտու ո՛րք էիր, չոճուխա... թիւ սէ՞, օմորֆիմու, Աշոտը Զաթիւնային չիչէք մը տուաւ: Զաթիւնային ֆիանսէն ալ, Էտոբերա կեցած էր, թօ իսէ քէ եւ-պանիի պէս թոխատ մը զարկաւ Աշոտին: Լը Տոն ժուան պիէն քոննիւ Աշոտը չախըճիի պէս պուչախը քաշեց մէ Զաթիւնան մէջ մտաւ. Էլ ա